



ԿԵՆՍՈՒԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ



այ գրականության մեջ տակավին բացակայում են Միքայել Նալբանդյանի պատանեկական, հատկապես Նախիջևանյան, շրջանին վերաբերող մանրադննդի ուսումնասիրությունները: Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատություններում քննված չեն պարզաբանված մի շարք խնդիրներ, ինչպես օրինակ, թե ի՞նչից զբղջված նա հոգևոր կոչումն ընդունեց, մտավոր զարգացման ի՞նչ պաշար ուներ այդ ժամանակները, ի՞նչ հարցերի շուրջը պայքարի մտավ Ներսես կաթողիկոսի, Նախիջևանի քաղաքագլուխ աղա Հարություն Խալիպովի ու սրա համախոհների հետ և վերջապես ի՞նչը ստիպեց նրան իր հայրենական տունը թողնելու ու փախուստի դիմելու:

Հայկական ՍՍՌ Կենտրոնական արխիվում վերջերս մեր կողմից հայտարարված նյութերը վերաբերում են հենց այդ, վերը նշված, խնդիրներին և նոր լույս են սփռում Նալբանդյանի պատանեկական շրջանի գործունեության վրա:

Ուտի, այս հանգամանքը նկատի առնելով, մենք ավելորդ չենք համարում հրապարակել Նալբանդյանի կյանքի ու գործունեության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող այդ նորահայտ նյութերը:

Սակայն, այդ նյութերի շարադրման դուգրնթաց, մենք անհրաժեշտ ենք համարում նաև որոշ կենսագրական տեղեկություններ հաղորդել պատանի Նալբանդյանի մասին:

1829 թվի հոկտեմբերի 26-ին, Նոր Նախիջևանում, աղբատ Ղազարոսի ընտանիքում, վերջինիս չորրորդ ամուսնությունից

հետո, ծնվում է մի վտիտ մանկիկ, որին կոչում են Միքայել:

Ինն տարեկան Միքայելին հայրը տեղավորում է տիրացու Օքսենտ Եղիշեի դպրոցում: Ուշիմ Միքայելը շատ կարճ ժամանակամիջոցում յուրացնում է այն բոլոր գիտելիքները, ինչ որ ի վիճակի էր տալու նրան տիրացուն: Ղազարոսը, նկատելով ուսման հանդեպ որդու ունեցած մեծ սերը և արտակարգ ընդունակությունները, այս անգամ էլ նրան տեղավորում է իր ժամանակի հայտնի հայագետ Գաբրիել քահանա Պատկանյանի դպրոցում, որտեղ նա մոտ վեց տարի սովորում է:

Այդ տարիներին հայ հասարակական կյանքում մի շարք իրադարձություններ են տեղի ունենում, որոնք չէին կարող չանդրադառնալ նաև Նոր Նախիջևանի հասարակական կյանքի վրա: Հովհաննես Կարբեցու մահվանից հետո, էջմիածնի թափուր գահի գահակալ է ընտրվում Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին: Վերջինս ընտրվելուց հետո հրավիրվում է Պետերբուրգ, և դրա համար էլ փոխանակ անմիջապես էջմիածին ուղևորվելու, նախ մեկնում է Պետերբուրգ, որտեղ ծանր հիվանդանում է: Ապաքինվելուց հետո Ներսես Աշտարակեցին Պետերբուրգից վերադարձին այցելում է մի շարք հայաբնակ քաղաքներ, որոնց թվում և Նոր-Նախիջևանը, ու էջմիածին է հասնում 1846 թվի մայիս ամսին: Նոր-Նախիջևանում բավականին երկար ժամանակ մնալով կաթողիկոսը մի շարք գործեր է տնօրինում. նախ քաղաքագլուխ Հարություն աղա Խալիպովին էջմիածնի գործակալ կամ վեթիլ կարգելով նրան է հանձնում եկեղեցիների բոլոր գումարներն ու եկամուտները պատվիրելով հաշվետու լինել միայն իր առջև, այնուհետև փակում է

Գարբիել քահանա Պատկանյանի դպրոցը, իրեն քահանային էլ պաշտոնի նշանակում թիֆլիսում, իսկ նոր-Նախիջևանում էլ ուսուցիչ կարգելով կաթողիկոսական Մկրտիչ Եկենյան վարժապետին, ամենախիստ կերպով պատվիրում է հոգևորական կոչման համար բոլոր պատրաստվողներին պարտադիր կերպով հաճախել Եկենյանի դպրոցը միաժամանակ քաղաքագլուխ Նալիպովին հանձնարարում է խիստ հսկողություն ունենալ հոգևոր կոչման համար պատրաստվողների վրա և որոնք չեն հաճախի Եկենյան վարժապետի ընծայարանը, նրանց զրկել իրենց իրավունքներից:

Ահա այս իրադրության հետևանքով, Նալբանդյանն էլ ստիպված է լինում, որպես տիրացու, մյուսների հետ միասին հաճախել Եկենյանի ընծայարանը: Մեկ-երկու անգամ հաճախելուց հետո Նալբանդյանը շուտով նկատում է ուսուցչի տգիտությունն, ինչպես նաև դպրոցի սխուլաստիկ ուղղությունը, և հրաժարվում է պարապմունքներին մասնակցելուց, ասելով թե՛ «ես ձեր սովորեցածը արդեն վաղուց սովորել եմ, և առավել մանրամասնաբար քան թե դուք դաս եք տալիս»:

ՆԵՐՍԷՍ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ԱՆՀԱՍԱՆՆԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԻՎԱԿԱՆ ԻՍԽԱՄԵՇԱՐ ԱԹՈՒՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԵՒ ԷՋՄԻԱՄՆԻ

Սրբազան Մատթեոս եպիսկոպոս վիճակաւոր ի նոր Նախիջևանայ և Բեսարաբիոյ

Ողջունիւ Քրիստոնէական խնդրեմ առաքել մեզ զտոմարագրութիւն ամենայն եկեղեցականաց հայոց ի ձերոց վիճակի ըստ անուանց իւրաքանչիւրոց եկեղեցիաց քաղաքաց և գիւղօրէից և ի նոսին գտանեցեալ իւրաքանչիւր քահանայից, աւագ սարկաւազաց, ուրարակրաց, նշանակեցեալ դպրաց ամօք իւրաքանչիւրոցն հասակի և հանդերձ որքանութիւն և պահանջութիւն ուսմանց նոցին:

Եւ ընդ այնոցիկ գրել անուն անուն զանուանն ձեռնադրելոցն ձեր սրբազնութեանց յետ մտանելոյն ձեր ի կառավարութիւն այդմ վիճակի՝ քահանայ, կամ աւագ սարկաւագ, կամ ուրարակիր և կամ դպիր երկու կամ շորս աստիճանաւոր հանդերձ նշանակութեամբ եկեղեցեացն յորոյ նոքա գտանին:

Մեք ի լինելն Մեր ի Նախիջևան յանձնեցաք զուսուցչութիւն ամենայն հոգևորականացուաց պատուելի վարժապետ Մկրտիչին Եկենեան ոչր աղագաւ հարցախնդիր եղեալ մինիստրն պրօսվեշչենիի՝ գրեալ էր նա մինիստրին ներսնային գործոց, և նա գրեալ առ մեզ, Մեր պատասխանեցաք նորուն բարձր

ունիք նոր բան սովորեցնելու, սովորեցուցեք, ես պատրաստ եմ ուրախութեամբ սովորելու, բայց եթե չունիք, ապա ուրեմն խնդրեմ արձակեցեք ինձ»):

Կաթողիկոսը լսելով տիրացւի այս հանդրգնություն մասին, հրամայում է մի գրաբար շարադրություն գրել տալ նրան: Նալբանդյանը գրում է այդ շարադրությունը և կաթողիկոսը միանգամայն գոհ մնալով ազատում է նրան Մկրտիչ վարժապետի մոտ սովորելուց:

Նալբանդյանի կենսագիրները, ձեռքի տակ համապատասխան տվյալներ չունենալով, կցկտուր և հակասական տեղեկություններ են հաղորդում Ներսես կաթողիկոսի նոր-Նախիջևանում իջևանելու ու այստեղ որոշ կարգադրություններ անելու, ինչպես և էջմիածին ժամանելու ժամանակի վերաբերյալ: Մեր ձեռքի տակ է գտնվում Ներսես կաթողիկոսի 1850 թվի օգոստոսի 30-ին գրած և նոր-Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսին հասցեագրված կոնդակը, որը ձշտում է այդ տեղեկությունները: Ստորև բերում ենք այդ կոնդակն ամբողջությամբ:—

գերազանցութեան յայնժամ, այժմ պայծառափայլ Ղրաֆ և և Ալեքսէիչ Պերովսկոյն յայտնեալ նորուն պայծառափայլութեան՝ թէ կարգեալ եմք Մեք վասն արժանաւոր գիտութեանցն նաև ուսուցիչ եկեղեցականաց մերոց, և նորին պայծառութիւն յայտնեալ զայնմանէ՛ մինիստրին լուսաւորութեան, ըստ այնմ ապա գրեաց Մեզ նորին պայծառափայլութիւն զի եկեղեցին-ուսուցիչ ըստ մերում կարգադրելոյն:

Այսպիսի հոգունակութեամբ Մեր յաղագս սահմանաւորելոյ զընթասն եկեղեցական կառավարութեանց հաւատացելոց Մերում համազգական հօտապետութեանց Մեք յամի 1845, ի լինելն Մեր այդր ի նոր Նախիջևան յանձնեցաք պատուելի Մկրտիչ վարժապետին Եկենեան զամենայն զհոգևորականացուա՝ զի նա ուսուցէ զամենեսին ի հարկաւորան ազգական քահանայացութեանց, և առանց ուսմանց չլինիցին նոցա ընդարձակութիւն մտանելոյ ի կարգ եկեղեցական կամ

*) Մ. Նալբանդյան.— Երկերի լիակատար ժողովածու, հատոր առաջին, 1945 թ. Երևան, էջ 491:

ընդունիլ որպէս եկեղեցական զարդինսն եկեղեցականութեան վասն որպիսի և իցէ օրինակադրութեանց:

Եւ վերատեսչութիւն յաղագս հնազանդութեանց այնոցիկ նշանակեալ եկեղեցականացուաց և հոգունակութեանց վասն բարեջան աշխատութեանց պատուելի եկեղեցական յանձնեցաք նորին արժանանձնութեան քաղաքագլուխ աղայ Յարութիւն Պօղոսեան Ղալուպովեանց այնու պատուիրանաւ զի ոչ ոք չայնցանէ շունիցի աշակերտիլ ըստ արժանեաց՝ շունիցի նա իրաւունք լինիլ եկեղեցական: Այլ մինչև ցայսօր չընկալայ և ո՛չ զմի ծանօթութիւն վասն որպիսաբար հոգունակութեանց վարժապետ եկեղեցական և քաղաքագլուխ աղայ Յարութիւն Պօղոսեան Ղալուպովեանց. և ես ընկղմեալ ի զբաղունս անվախելական դրութեանց եկեղեցական հոգևորական կառավարութեանց Վրաստանայ հայոց վիճակի մանաւանդ յամի 1845 դեկտեմբերի 17 ժամանեալ ի Թիֆլիզս և յամի 1846 յամսեանն մայիսի ժամանեալ ի սուրբ Աթոռքն. առ հարկին պահանջելոյ ի նոյն ամք ի դեկտեմբերի 4 ելիլ յԱթոռոյն և ժամանեալ ի Թիֆլիզ ի 17 դեկտեմբերի գտաք ի վերազննութիւն անարժանութեանց հոգևորական կառավարութեանց զամիսս 18 և հուակ զկնի վերադարձեալ յԱթոռն յամի 1848 յամսեանն յուլիսի. հարկադրեալ դարձեալ վերադարձաք ի Թիֆլիզ յամի 1849 ապրիլի 8 լուսով վերադառնալոյ անդրէն յԱթոռն մինչ ցլրումն ապրիլի. այլ ապաբախտութիւն բազմաւ գրեալ զմեր և կոնսիստորիական կառավարչական ի

ցաւալի դրութիւն. մնացաք ի հոգացողութեան Մերում պարտաւորութեանց զամիսս 15 և անազան վերադարձեալ անդուստ ժամանեցաք յԱթոռն ի յուլիսի 8 ամսեանն անցելոյ ուր տակաւին անծանօթ ամենայն հարկաւորեալ սպասելոյ Աթոռայնոց՝ պայծառաւորիմք մտանել ի վերազննութիւն պատշաճելոցն Մեզ, և Մերով աննկատողութեամբ հոգալ վասն կարևորացն Մեզ յաղագս համազգական մերոց պաշտաւորութեանց:

Ընդ այսմ գրեցի և առ պատուելի եկեղեցական և աղայ Ղալուպովեանն վասն տալոյ Մեզ գտեղեկութիւն յաղագս որպիսաբար արդիւնաւորելոյ նոցա ըլանձնարարութիւն Մեր ի մասին եկեղեցականացուաց ուսումնականութեանց, և յաղագս լսելոյ նոցա մինչև ցայժմ ի մասին այնպիսի հարկաւորագոյն ազգաօգուտ յանձնարարութեանցն Մերոց չօգնեաց մինչև ցայսօր:

Խնդրեմ և ի ձեր սրբազնութեանց պարտաւորել զնոսա գրել ոչ անազան զծանօթութիւնսն յաղագս այնմ յանձնարարութեանցն Մերում ինքեանց՝ ի մասին ուսուցանելոյ և պատրաստելոյ զեկեղեցականացուան ի նախիջևան քաղաքի: Մեք ըստ շնորհաց Աստուծոյ, ուրախ եմք, զի ունիմք ընկալնուլ ի սուրբ Աթոռոս ի 5 հոկտեմբերի զժառանգն կայսերութեան Ռուսաց զնորին կայսերական Բարձրութիւն Աղէքսանդր Նիկոլաևիչն, որ ունի դիել ի գիրկս սրբութեան մօրն լուսոյ ազանց Հայաստանեայց, զոր համարիմք Մեզ բարեբախտութիւն համազգական: Ողջ լեր:

Կաթողիկոս Ամենայն Հայոց՝ Ներսէս

№ 290

յամի 1850 և ազգական 1299
օգոստոսի 30 ի սուրբ Էջմիածին*)

Նալբանդյանի բարեխիղճ կենսագիր Երվանդ Շահազիզը, խոսելով Պատկանյանի դպրոցում պատանի Միքայելի ձեռք բերած գիտութեան ու մտավոր պաշարի մասին, հանգում է հետևյալ եզրակացութեան. «Թէ որքան զարգացումն, որքան գիտութիւն ձեռք բերեց Միքայելը Պատկանեանցի մոտ, մենք ձեռքներին գրաւոր ապացոյց չունենալու պատճառով, ճշտութեամբ չենք կարող ասել. բայց ի նկատի առնելով, որ նորա Տէր-Գաբրիէլից ստացած գիտութիւնը ծառայեց իբրև հիմք նորա ապագայ գիտութեան և գրաւոր վաստակների, կարելի է ասել, որ նա գրաբար այնքան սովորեց, որ առանց զգալի

դժուարութեան կարդում ու հասկանում էր մեր մատենագրների գրուածները, գիտէր հայոց պատմութեան կմախքը, ծանօթ էր Հայոց եկեղեցու պատմութեան, և վերջապէս, բոլոր իւր աշակերտութեան ժամանակամիջոցում տիրացութիւն արած լինելով, լաւ գիտէր եկեղեցու ժամասացութիւնը և արարողութիւնը: Իսկ ինչ որ վերաբերում է նորա այդ ժամանակաւ զարգացման աստիճանին, թէ և այդ մասին գրաւոր ապացոյց նույնպէս չունենք, բայց ի նկատի առնելով, որ դպրոցից դուրս գալով, նա ուսման գործը չը թողեց, ինքնուսուցեամբ շարունակեց իւր ուսման թերին լրացնել, միշտ ամեն բանի հետաքրքիր լինելով, միշտ կարդալով ու անցածը կրկնելով, կարելի է գալ այն եզրակացութեան, որ նա Պատկանեանի դպրոցից ուս-

*) ՀՍՍՐ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ № 54, գործ № 2894, էջ 1:

ման սիրոյ հետ միասին և բաւականին զարգացման պաշար տարաւ»*):

Այս առթիւ կարեւոր ենք համարում բերել մի գրաւոր վավերական, որը կազմել է Նոր-Նախիջեանի ու Բնասարաբիայի թիմի առաջնորդ Մառնուս Եպիսկոպոսը, կաթողիկոսի վերը բերած կոնդակի համաձայն: Թիմի տոմարագրութեան մեջ, դպիրների բաժնում, համառոտակի կերպով շարագրված են Նալբանդյանի պաշտոնի, ուսման և սովորած առարկաների մասին հետևյալ տեղեկութունները.—

«Միքայէլ դպիր Ղազարեան Նալբանդեանց 21 ամաց հաստատեալ է ի դպրութեան սուրբ Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ ի Նորին Աստուածաբնատիր Վեհափառութենէ յամի 1845, ապա յամի 1848 ընկալեալ է զչորս աստիճան ջահընկալութեան ի Մատթէոս վիճակաւոր Արքեպիսկոպոսէ, ուսեալ է առ Գարբիէլ քահանայն Պատկանեանց զքերականութիւն, զճարտասանութիւն և զհայկաբանութիւն. զԱստուածաշունչ դիրս հին և նոր կտակարանաց, զսրբազան պատմութիւն, զԱզգային պատմութիւն, զմասնաւոր աշխարհագրութիւն և զՊուրաբանութիւն ևս և զլեզու Թուսաց գրել և ընթեռնուլ և զայլ գիտելիս վերաբերեալ թէ առ եկեղեցական սպասահարկութեան և թէ առ արտաքին տեղեկութիւնս, և գտանեցեալ է և գտանի դրագրական պարտաւորութեան առընթեր վիճակաւոր Արքեպիսկոպոսի իրոյ ի 1848 ամաց հետէ»**):

Այս վավերականի վրա մակագրված է՝ Միքայէլ դպիր Ղազարեան Նալբանդեանց:

Ընդունակ ու խելացի Միքայելը չէր կարող հանդուրժել, որ իր սիրած ուսուցչին փոխարիներ մի տգետ ու սխոլաստիկ ուղղութեան տեր վարժապետ. այս առթիւ 16-ամյա պատանին իր խորը զայրույթն է արտահայտում 1846 թվի փետրվարի 25-ին և մարտի 23-ին պրած իր նամակներում, որոնք հասցեագրված են այն ժամանակները էջմիածնում գտնվող նախիջեանցի տիրացու Սարգսին (վերջինս հայտնի էր Բարսեղ քահանա Պոպով ազգանվամբ): Նալբանդյանի այս երկու նամակները կրում էին դպիր Միքայել Ղազարյան Ուստայանց ստորագրութիւնը: Այս նամակներից հատկապես առաջինում նա հանդգնու-

թյուն էր ունեցել խիստ քննադատութեան ենթարկելու Նոր-Նախիջեանի աղաներին և զրանց հետ միասին նաև կաթողիկոսին.—

«Բովանդակեացուք արդ զդաշտս Ափրիկոյ ի քարտէզ նամակի և զլճակս Ասիոյ ի նիւթ սեակի, զանտառս Կովկասու ի գործ դիցուք փոխանակ գրչի, արդեօք կարե՞մք ի նմին բովանդակել զշափագանց յիմարութիւն մերոց քաղաքացեաց, որք գոլով ինքեանք յիմարք, զնոյն և զորդիս իւրեանց տուեալ յաշակերտութիւն ումեմն. Մկրտչի կարճահասակ լատինագաւանի, կոչին զնա վարժապետ:

Ո՞վ յիմարութեան ազգիս Հայոց... Կաթողիկոս Ամենայն Հայոց Ներսէս կարգեալ դայս լատին ուսուցիչ ամենայն հոգեւորաց, հրամայեց աղա Յարութիւն Ղալուպովի հարկադրել զեկեղեցականս՝ զնորընծայ քահանայս և տիրացուս, գալ և ուսանել զարհեստ քերականութեան: Գրէ առաքեալն. «Ամենայն ոք, որ ընդ իշխանութեամբս ի հնազանդութեան կայցէ»: Եւ զայս հպատակութիւն ցուցեալ մեր Հայրապետին, հաճեցաք առնել զայն, բայց ահամայ, քանզի սկներև տեսանէաք, զի այս ծառ չար, շուներ տալ զպտուղ ինչ, ինչ և իցէ, այժմ ամենայն հոգեւորականք երթան առ նա՞, այլ ես չհանդուրժեմ, ես գոլով աշակերտ Տէր Գարբիէլի, զիա՞րդ համբերեցից այսմ»*):

Տիրացու Սարգիսը հետագայում Նալբանդյանի սույն նամակները հանձնում է կաթողիկոսին. վերջինս էլ զրանց պատճենները հանել տալով 1849 թվի սեպտեմբերի 2-ին № 218 կոնդակի հետ միասին ուղարկում է Նոր-Նախիջեանի քաղաքագլուխ Հարություն Խալիպովին՝ պատվիրելով նամակի հեղինակին պատասխանատվութեան կանչել և խիստ պատժել: Կաթողիկոսի կոնդակը ստանալով Խալիպովը 1849 թվի դեկտեմբերի 1-ին մի գրութիւն է գրում Նոր-Նախիջեանի հոգեւոր կառավարութեանը՝ պահանջելով քահանա ներկայացուցիչ նշանակել, որպեսզի նրա ներկայութեամբ քննվի «հանցապարտ» դպիր Միքայել Ղազարյանի և սարկավագ Նդիա Շաբշնիկյանի գործը և արդյունքի մասին զեկուցվի Նորին Վեհափառութեանը: Ստորև բերում ենք այդ գրութիւնը.—

Ի նախիջ. Հայոց քաղաք. գլուխ Խալիպովէ
№ 206
ի 1 դեկտեմբերի 1849 ամի

Ի նախիջեանու Հայոց Հոգևոր կառավարութեան

*) Եր Շահազիզ.— Միքայել Ղազարեան Նալբանդյանց, 1897 թ. Մոսկուա, էջ 9—10:

**) ՀՄՍՒ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ № 54, գործ № 2894, էջ 7:

Նորին Վեհափառութիւն սրբազնասուրբ կաթողիկոսն ամենայն Հայոց ընդ կոնդակի

*) Երվանդ Շահազիզ.— Գիվան Միքայել Նալբանդյանի, 1932 թ. Երևան, էջ 22—23:

իրում յ 2-էն սեպտեմբերի ներկայ ամի, համար 218, առաքելով առ մեզ զօրինակս գրութեանց ատենադպրի կառավարութեանդ նշխայ սարկաւազ Շաբշնիքեանի և Միքայէլ դպիր Ղազարեան Ուստայեանց, հրամայէ մեզ ընդ քաղաքական հոգաբարձուաց՝ պահանջեալ ի կառավարութենէդ զմի ոմն ղէպուղաթ քահանայ և նորուն ներկայութեամբ առնել քննութիւն վասն գրելոցն ի նոցանէ, և զօրինակ քննութեանն ստորագրութեամբ մերով առաքել առ նորին Վեհափառութիւն:

Ի հետևումն որոյ՝ խոնարհաբար խնդրեմ ի կառավարութենէդ՝ նախ նշանակել զմի

Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությունը, իր դեկտեմբերի 7-ի նիստում քննության առնելով խալիպովի գրությունը, որոշում է դիմել Նոր-Նախիջևանի ու Քեսարաբխայի թեմի վիճակային կոնսիստորիային և խնդրել նրա ցուցմունքներն այս առթիւ: Ահա այդ որոշումը. — «Որովհետև ըստ զօրութեան 80 յօդուածոյ բարձրագոյն կարգագրութեան, ուր հրամայեալ է թէ «Հոգևոր կառավարութիւնը լուսատրչական Հայոց եկեղեցւոյ ստորագրեալ են վիճակային հոգևոր Ատենից այսր դաւանութեան և ո՛չ ինչ կատարել առանց յատուկ առ այն յանձնարարութեան հոգևոր Ատենից», վասնորոյ յայտնել յայմանէ առանձին յայտարարութեամբ վիճակային կոնսիստորիային Նախիջևանայ և Քեսարաբխոյ և խնդրել թէ զինչ պարտ իցէ առնել կառավարութիւնս որպէս վասն դեպուտատին, նոյնպէս և վասն Միքայէլ դպրին Ղազարեան, որ ոչ գտանի այժմ սստ ի քաղաքս. զորմէ և ծանուցանել ինքեան խալիպովին»^{*)}

Այս որոշման համաձայն հոգևոր կառավարությունը դեկտեմբերի 16-ին № 753 գրությամբ դիմում է վիճակային կոնսիստորիային՝ իսկ վերջինս էլ, իր 1850 թվի հունվարի 4-ի գրությամբ, կարգադրում է կատարել քաղաքագլուխ խալիպովի պահանջը՝ հիմնովնով կաթողիկոսի կոնդակի վրա և գործի քննութլունից հետո իրազեկ պահել կատարվածի մասին: Ինչ վերաբերում էր Միքայել Ղազարյան Ուստայեանցին, կոնսիստորիան հայտնում էր, թե քանի որ նրա քաղաքից բացակայելու պատճառները և որանդ գտնը վիճել իրեն հայտնված չէ, ապա ինքը ի վիճակի չէ որևէ տնօրինություն անել ապահովելու համար նրա ներկայությունը քննության

ոմն ղէպուղաթ քահանայ, յաղագս ներկայ գտանելոյ ի ժամանակի քննութեան յանձնեղեալ մեզ գործոյ, որ վասն գրութեանց նշխայ սարկաւազ Շաբշնիքեան և Միքայէլ դպիր Ուստայեանի, և զանուանէ նշանակեալ քահանայքն ծանուցանել մեզ յանպաղ ժամանակի. և երկրորդ՝ որպէս երևի՛ զի Միքայէլ դպիր Ուստայեանն չը գտանի յայժմս ի քաղաքիս ապա վասն ներկայ գրտանելոյ նորին քննութեան ժամանակին, առնել պատկանեալ զիւրն կարգադրութիւն:

Քաղաքական գլուխ խալիպով^{*)}

Ժամանակ: Այդ գրության մեջ ասված է. — «Հրամայեցին հրամանագրել Հոգևոր կառավարութեան Նախիջևանայ կատարել զըպահանջ քաղաքական գլխոյ Աղնուական Աղայ խալիպովի զհիմնեցեալն ի վերայ կոնդակի նորուն Վեհափառութեան սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց՝ նշանակելով զմի ոմն ի քահանայից դեպուտատ. յորում և պատիրել զի ընդ աւարտելն զգործն քննութեան զօրինակն այն գործոյ բուն նշանակութեամբ մատուցի Ատենիս ի ձեռն դոյն կառավարութեանդ վասն առնելոյ ի գործս սորին. իսկ յաղագս Միքայէլ դպրին Ղազարեան Ուստայեանց որովհետև Հոգևոր կառավարութիւնը յորումն յայտարարութեան չէ նշանակեալ թէ ու՛ր գտանի նոյն դպիրն և որով սլաշտօնատարութեամբ հետացեալ է ի քաղաքէ անտի», յայն սակս կոնսիստորիայս յաղագս ներկայ ածելոյ զնա ի ժամ քննութեան չը կարէ առնել զտնօրինութիւն ինչ, զայսպիսի տնօրինութիւն Ատենիս ծանուցանել վասն տեղեկութիւն և նորին բարձու սրբազնութեան յայտարարութեամբ»:

Անդամ կոնսիստորիայի Աւետիս քհն. Տեր-Աւետիսեան
 ի 4 յունվարի 1850 ամի, ի Քիշին^{**)}

խալիպովի հետապնդումնից խույս տալու համար ավագ սարկավագ Սղիա Շաբշնիկյանը երկու բողոքագիր է ներկայացնում վիճակային կոնսիստորիային, հիշատակելով այն ապօրինությունները, որ կատարում է խալիպովը՝ անիրավացի կերպով հոգևոր գործերին խառնվելով:

Այս առթիւ վիճակային կոնսիստորիան, 1850 թվի հունվարի 22-ի գրությամբ, նա-

*) ՀՍՍԻ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ № 54, կենցաղային բաժին գործ № 681, էջ 7:

*) ՀՍՍԻ Պետական կենտրոնական արխիւ, ֆոնդ № 54, կենցաղային բաժին գործ № 681, էջ 6:
 **) Նույնը- էջ 8:

խիջևանի հոգևոր կառավարութեան հրամարտէ է հիշեալ գործը քննելու համար դպրատան նշանակել ավագ քահանա Տեր Խաչատուր Սեթյանին: 1850 թվի մարտի 6-ին Նախիջևանի հոգևոր կառավարութունը նորից քննութեան առնելով այդ խնդիրը որոշում է քաղաքագլուխ Խաչիպովից պահանջել

իրեն ներկայացնելու Ներսես կաթողիկոսի 1849 թվի սեպտեմբերի 2-ի կոնդակի վավերացված օրինակը:

Հոգևոր կառավարութունը, իր 1850 թվի մարտի 19-ի № 170 գրութեամբ, դիմում է Խաչիպովին և իրազեկ դարձնում այս կայացված վճռի մասին.

Նորին Ազնուականութեան Արգոյ Բաղախական զուխ Յարուրին Խաչիպովի

Ընկալաւ Հոգևոր կառավարութիւնս զՀրովարտակ վիճակային կոնսիստորիային Նախիջևանայ և Բեսարաբիոյ ի 22-էն յունվարի սոյնոյ ամի համարաւ 54, որով հրամայէ քննել զգործն վասն գրութեանց Եղիայ սարկաւազի, զորոյ զթուղթան Անդամք կառավարութեանս Տէր Մարտիրոսն և Տէր Կարապետըն հասուցեալ էին առ Նորին Վեհափառութիւն սրբազնագոյն կաթողիկոսն ամենայն Հայոց Ներսէս, նոյնպէս և հրամայէ կոնսիստորիայն պահանջել ի Ձէնջ զօրինակն կոնդակի Նորին Վեհափառութեան որ առ Ձեզ զորմէ Ձերդ Ազնուականութիւնն ի 1 դեկտ. 1849 ամի համարաւ 206 գրեալ ունիք Հոգևոր կառավարութիւնս վասն դպրատան, որպէս թէ Նորին Վեհափառութիւնն յ 2-էն սեպտեմբերի յիշեալ 1849 ամի համարաւ 218 ընդ կոնդակի իւրում առաքեալ առ Ձեզ

զօրինակս գրութեանց Եղիայ սարկաւազի և Միքայէլ դպրի յանձնեալ իցէ Ձեզ զքննութիւնն և այլն:

Այլ այժմ որովհետև Հոգևոր կառավարութիւնս ըստ հրովարտակի կոնսիստորիային պարտ է հիմնիլ ի վերայ յիշեալ կոնդակի նորուն Վեհափառութեան որ առ Ձեզ յ 2 սեպտ. № 218: Վասնորոյ վերաբերեալ այժմ այսու միաւորակեալ առ Ձերդ Ազնուականութիւն խնդրէ խոնարհաբար բարեհաճել որքան հնար իցէ ի կարճ միջոցի յընթաց երկուսուրց հասուցանել Ատենիս զվաւերացեալ Ձերով ստորագրութեամբ զօրինակն կոնդակին ի հրահանգութիւն Ատենիս, և զսոյնպիսի տնօրէնութիւն իւրմէ կառավարութիւնս ծանոյց որպէս Եղիայ սարկաւազին Շաբշիքեանց նոյնպէս և Միքայէլ դպրին Ղազարեան որ եկեալ է արդէն աստ, յաղագրս գիտութեան նոցին: *)

Սույն գրութունը կարդալուց Խաչիպովը շատ դժգոհ է մնում և իր մարտի 11-ի № 47 պատասխան-գրութեամբ հայտնուի է, թե կաթողիկոսի կոնդակից չի երևում, որ վիճակային կոնսիստորիան իրավունք ունի իրենից պահանջելու նրա օրինակը, և որ ինքը մինչև որ չունենա կոնսիստորիայի հրովարտակի ճիշտ օրինակը, չի կարող կատարել հոգևոր կառավարութեան պահանջը. «...Այլ որովհետև ի կոնդակէ Նորին Վեհափառութեան,— գրում է Խաչիպովը— որով հրամանագրեալ է ինձ քննել զվերոհիշեալ գործն՝ ո՛չ երեկ թէ վիճակային կոնսիստորիայն ունի պահանջել յինէն զօրինակն այնորիկ որպէս այժմ երեկ ի հաղորդագրութենէ կառավարութեանդ վասն այն, ես մինչ յունիսն իմ զճիշտ օրինակն ի հրովարտակէ վիճակային կոնսիստորիային ոչ կարեմ կատարել զներկայ պահանջողութիւն կառավարութեանդ»։*)

հանջը անհետեանք թողնել այնքան ժամանակ, մինչև որ նա կներկայացնի Վեհափառի գրած կոնդակը.— «Հրամայեցին. զներկայ պահանջողութիւն քաղաքական գլուխ Խաչիպովին վասն տալոյ նմա զճիշտ օրինակ Հրովարտակի կոնսիստորիային և վասն տալոյ նմա զդպրատան յաղագս քննելոյ զօրինակս գրութեանց թողուլ անգործ առանց կատարման, մինչև ո՛չ յանդիման արացի զիսկական կոնդակն Նորին Վեհափառութեան. հետեւեցին վասն սոյն իսկ առարկայի ընդ նմին և յայտնել Նորին Ազնուականութեան զի ամենայն ինչ կոնդակ և հրամանագրութիւնք Նորին Վեհափառութեան ընդունելի է Ատենիս՝ միմիայն զի Նորին Ազնուականութեան այսուհետև միտ երբ և պատահեսցի առաջի արացի կառավարութեանս զիսկական կոնդակն յայտնելով զամսաթիւն և զհամարն իսկութեամբ վասն առանց տարակուսութեանց լցուցանելոյ, զի մի լիցի Ատենիս շփոթութիւն ինչ. զորմէ տալ գիտել հրովարտակաւ երկոցունց՝ Եղիայ սարկաւազին և Միքայէլ դպրին և առանձին յայտարարու-

*) 2ՍՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 681, էջ 20:

*) 2ՍՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 681, էջ 19:

թեամբ ծանուցանել նորին բարձր Սրբազնութեանն: *)

Հոգևոր կառավարությունն այս որոշման պատճենները մարտի 17-ին ուղարկում է՝ № 204 գրութեամբ Խալիպովին, № 205 գրութեամբ նորին բարձր սրբազնութեանը, № 206 գրութեամբ Եղիա սարկաւազին և № 207 գրութեամբ դպիր Միքայել Ղազարյանին:

Այնուհետև քաղաքապետի Խալիպովը մարտի 25-ի № 57 գրութեամբ իր դժգոհությունն արտահայտելով հոգևոր կառավարությանը Վեհափառի հրամանի նկատմամբ նրա բռնած դիրքի համար, վերջինիս Իրազեկ է դարձնում իր մտազրույցում՝ հիշյալ խնդրի շուրջը երկուստեք տեղի ունեցած գրազրույցումնեքի բովանդակությունը նորին Վեհափառությանը հարողելու մասին: Բերում ենք նրա այս գրության վերջին պարբերությունը. «Տեսեալ իմ զայդպիսի ընթացմունս Հոգևոր կառավարութեան ոչ վերաբերեալ առ նպատակն. այլ հետևիլ նորա թողուլ զսրբազան հրաման նորին Վեհափառութեան անգործ և անկատար, պարտաւոր համարեցայ զամենայն գրութիւնս ըստ այսր առարկայի, զօրինակս միաւորականաց կառավարութեանդ առ իս և իմոց առ կառավարութիւնդ, առաքել առ նորին Վեհափառութիւն ի բարեհաճութիւն կամաց նորին»**):

Խնդիրը ավելի է բարդանում. ներսես կաթողիկոսը, ծանոթանալով գրութեաններին, խիստ հեղափոխական դիմանում է վիճակալին առաջնորդին, որը խոչընդոտ է հանդիսացել իր հրամանի կատարմանը՝ անբարյացակամ վերաբերմունք ցուցաբերելով՝ էջմիածնի Մայր Աթոռի գործակալ աղա Հարություն Խալիպովի նկատմամբ: Ի վերջո կաթողիկոսն առաջարկում է անհապաղ էջմիածին ուղար-

կել հանդուգն Շաբրշնիկյանին և Նալբանդյանին: Սակայն, դրանով ևս հարցը չի լուծվում, այլ ավելի սուր կերպարանք է ընդունում: Խալիպովի հակառակորդները բողոքներ են ուղարկում սենատ, ներքին գործերի մինիստրություն և այլուր, հիշատակելով հոգևոր իշխանության գործերի մեջ խառնվելու նրա ապօրինի քայլերը: Խալիպովի զեկուցագրում, գրված 1852 թ. նոյեմբերի 18-ին և հասցեագրված կաթողիկոսին, այդ մասին կարդում ենք «...Այն է ի 3 ներկայամտոյս ընկալայ ի Թափանոկու քաղաքապետէն զնիազ Լիվինէ հրամանագրութիւն գրեալ ի 30-էն անցեալ հոկտ. համարաւ. նորին պայծառափայլութիւնն ընդ այս հրամանագրութեանն առաքեալ էր ևս մատուցեալ Եղիայ քահանային Շաբրշնիքեան խըն դիր զանգատանաց ի կառավարիչ սենաթն առաջին տեքառամենի՞ զտնօրինութեանէ Վեհափառութեան Չերոյ, սինոթի սուրբ էջմիածնի, զբողոքորդէ նորուն, ապա ի վերջոյ և զինէն, պահանջողութեամբ լինէն պատասխանոյ ի դէմ այնպիսի գանգատանաց քահանային. պարունակելոցն յայն խնդր, և մասամբ իւր վերաբերելոց առ իս. ի նրմին հրամանագրութեան ընթերցեալ տեսի, զի սենաթն ըն-



Միլայել Նալբանդյան

կալեալ զայնպիսի խնդիր գանգատանաց, կարգաւորեալ է առաքել զայն առ պարոն մինիստրն ներսեսային գործոց ի տնօրէնութիւն ըստ այնմ լիւրմէ կողմանէ. յետ որոյ և պարոն օգնականն մինիստրին հանդերձ առաջարկութեամբ խորով հասուցեալ առ քաղաքապետն Թափանոկու հրամայեալ է պահանջել լինէն գրաւոր պատասխանի ըստ վերոգրելոյս. բայց նախքան զպատասխանատուութիւն իմ հարկ համարեցայ և արժան վարկայ առաքել զպատճէնն խնդրոյն այնորիկ ի հայեցողութիւն Վեհափառութեան Չերոյ:

Այսու գրեցելովն ոչ բաւականացեալ քահանայ Շաբրշնիքեանն գրգռեալ յանդուսպ

*) ՀՄՍԹ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 618, էջ 22:
**) Նույնը, էջ 25:

կրիցն համարձակեալ է և շարունակել ըզ-
գանգատանս իւր յանդուգն բանիւքն զարա-
րեալ տնօրէնութեանց Վեհափառութեան Ձե-
րոյ և սինոթի սրբոյ Աթոռոյ էջմիածնի, այն
է զի սինոթն ի հետևումն հրամանագրութեան
Վեհափառ Տեառնդ պահանջէ զնա ինքն յա-
տեանն իւր վասն պատասխանատուութեան
ըստ վերոգրեալ հանգամանացն. զորպիսի
տնօրէնութիւն նոյնպէս ո՛չ համարէ նա վա-
սըն ինքեան արարեալ համաձայն օրինաց,
չի՞ք ասէ օրէնք կամ կանոն, որովք թոյլա-
տրեալ լինի յայսպիսի հեռաւորութիւնէ պա-
հանջել զոք ի պատասխանատուութիւն:

Նմանօրինակ և հարակցաբար արձակ հա-
մարձակ գանգատէ ևս լիջեալ քահանայն
նոյն մատուցեալ խնդրով զինէն գրելով այս-
պէս. Նախիջեանայ քաղաքական գլուխ
Խալիպովն ըստ ո՛չ թոյլատրելոյ օրինաց եր-
բէք ումեք յայսպիսի իշխեցողութիւն. ձեռ-
նամուկս լինի միշտ ի գործս հոգևորականաց
քաղաքիս, որ այս օրինօք արգելեալ է ասէ,
որովհետև և վերաբերէ թէ՛ չի՞ք երբէք տեղի
աշխարհական անձանց ի գործս հոգևորա-
կանաց, յաւելով ընդ այնմ և զայն, իբր ես
գրեալ խնդրեալ եմ յատկապէս ի Վեհափա-
ռութիւնէ Ձերմէ յանձնել ինձ զքննութիւն ծա-
պեալ տարածայնութեանն ընդ մէջ նորա և
տիրացու Բրոթոքոքովի. այսպէս և ըստ
գրութեան նորին երևելոյ յառարկայս գան-
գատանաց ի խնդրագործութեանն, լեալ եմ
պատճառ անբաւականութեան, զիւր իբր ի
ժամուս Վեհափառութիւն Ձեր երևեցուցանէ
առ Մատթէոս վիճակաւոր առաջնորդն մեր...

Նոյնպէս և պատշաճ վարկայ ի հայեցող-
ութիւն սրբազնաստուրք Տեառնդ առաքել
զպատճէն հրովարտակի վիճակային կոնսիս-
տորիայի յայն վախճանս, որպէսզի տեսա-
նիցէք զեղանակ համարձակախօս գրութեան
և վիրաւորիչ բանից յայնմ վերաբերելոց սե-
փականապէս առ իս. այն է՝ կոնսիստորիայն
իբր յարդարութիւն իւր և յապացուցութիւն
իւրոցն ընթացիցն վասն նշանակելոյ զգե-
պուտատ ի մասին քննութեան գործոյն Շա-
բըշնիքեանի արարեալ գլուով կարգադրութիւն
յիւրում ժամանակի ըստ զօրութեան կոնդա-
կի Վեհափառութեան Ձերոյ. այժմ անդէն յա-
ռաջ բերէ իբր զի ես սուտ եմ գրեալ առ Ձերդ
տէրութիւն վասն այնր ամի, որոյ վասն և
խնդրեալ է ի սինոթէն էջմիածնի զհանգա-
մանացս յայտնել Ձերում Վեհափառութեան,
որպէսզի այսու արարեալ իցեմ ինքեան շա-
րայար զրպարտութիւնս:*)

Այժմ անդրադառնանք այն խնդրին, թե ինչ

*) ՀՄՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ
№ 58, գործ № 4, էջ 4—5:

հանգամանքներ դրոջցին Նալբանդյանին
հոգևոր կոչում ընդունելու:

Ուստա Ղազար Նալբանդյանի բազման-
դամ ընտանիքը պատկանել է Նոր-Նախիջե-
վանի չքավոր դասին, սակայն Միքայել Նալ-
բանդյանի կենսագիրներէից ոմանք, թերևս
անպատվաբեր համարելով այդ իրողությու-
նը, ուստա Ղազարին դասել են միջակ ունե-
վորների շարքը: Այս սխալ տեսակետը հե-
տագայում ընդհանրացել ու տեղ է գրավել,
դժբախտաբար, նաև Շէյա գրականության
պատմութիւն» մեջ, որտեղ ասված է.—
«...Նրա հայրը, ուստա Ղազարը, կարողա-
նում էր առանց նեղութեան պահել իր բազ-
մամարդ ընտանիքը:») Այլ բան են ասում
մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը: Նոր-
Նախիջեանի հարկատու պարտապանների
ցուցակի 25-րդ համարում գրանցված ենք
տեսնում, ի շարս մյուսների, նաև Նալբանդ-
յանի հոր անունը: Քաղաքագլուխը ժամկետ
է սահմանում և խիստ հրամայում պարտա-
պաններին այդ ժամկետում մարել իրենց
պարտքերը. ահա այդ վավերականը.—

Ցուցակ

Ի հասարակութեան կարգաւորեալ վասն
1839 յամի քաղաքական խարճն իւրաքանչիւր
խարճավճար անձանց սաստիկ կուպատուի-
րէ որ պատկանեալ փողոյ բերէք ի դումս և
ստանալոցէք վասն վճարման դրամոց քվի-
թանցիայ:

Նդև յունիսի աւուր 1839 յամի **)
Այնուհետև սրան հետևում է ցուցակը, որի
25-րդ համարում գրանցված է Ղազար Գրի-
գորով նալբանդին— 30 ուրվի:

Սրան առնթիւր պետք է հիշատակել այն
հանգամանքը, որ Նկատերինա Բ կայսրու-
հու կողմից Նոր-Նախիջեանի հայ գաղութին
շնորհված արտոնութիւնները հետագայում
վերացվեցին և պետական ծանր հարկերը
վճարել դժվարանում էին ոչ միայն չքավոր-
ները, այլ և ունեւորները: Այս առնչու-
թյամբ Նոր-Նախիջեանցիները աղերսագրեր
են ուղարկում Նովորոսիո և Բեսարաբիայի
գեներալ-նահանգապետ գրաֆ Վորոնցովիին,
գեներալ գրաֆ Բեկենդորֆին, կազարյան եղ-
բայրներիին, որպեսզի վերջիններս միջնորդեն
կայսեր առաջ՝ ծանր հարկերը թեթևացնելու
համար: Ստորև բերում ենք կազարյաններին
ուղարկած աղերսագրերը.—

*) Հայ գրականութեան պատմութիւն, II դ., Երևան
1941 թ., էջ 17:

**) ՀՄՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ
№ 139, գործ № 48, էջ 6:

28 փետրվար ամիսն 1839 յամի

Գերազանցափայլ վեհազնեայ իշխան, պատուական աղայ խաչատուր Աղայ Յօվա- կիմեան, Ազգային անմահ բարերար:

Նորին պայծառափայլութիւնն պարօն նու- վոտսիոյ Բնասարաբեյոյ կենեբալ կուպեո- նաթոր գրաֆ Վորոնցովն ի մայիսի ամսոյ անցեալ 1838 յամի ընդ միաւորական գրու- թեան իրում առաքելով առ պայծառափայլ կենեբալ գրաֆ Պէքէնդորֆն զմատուցեալ յա- նուն նորին կայսերական մեծութեան ինքնա- կալին ամենայն Ռուսաց Նիկոլայ Պալովի- չին զաղերսագիրն Նախիջևանու հայոց հա- սարակութեանս յաղագս ազատս կացուցա- նելոյ զընակիչս քաղաքիս ի նորոգ հրատա- րակեալ արքունի հարկապահանջողութեանց և թողլոյ վնոսայ յառաջին վիճակի նոցայ ըստ զօրութեան ամենաողորմածաբար պար- զեալ 1779 ամի նոյեմբերի 14 մերում հա- սարակութեան, Պրիվիլեյիին բարեխօսեալ էր որպէսզի նա, մեծանուն կոմս Պէքէնդորֆն առաջի առնէր զայն աղերսագիր մեր նորին կայսերական մեծութեան ի գործ դնելով լիւրում կողմանէ և զիւրն բարեխօսութիւն ըստ սոյն առարկայի: Գերազանցափայլ իշ- խանապետ հասարակութիւն մեր յօրէ վերա- բնակելոցն իւրոց ի թերակզոյն Դրիմու ի սոյն քաղաք զբաղմագիմի արգասիս բարե- րարութեան օրհնաբանեալ ազգատոհմիդ Լա- զարեանց անջինջ գծագրեալ ունելով յերախ- տագէտ սրտի լիւրում և ի բազում փորձոց քաջ հաւատարմացեալ գոլով եթէ որչափ զե- րազանցափայլ վեհազնութիւն ձեր նախան- ձախնդիր է մեծագործութեան անմահա- ծնունդ նախնեաց իւրոց և թէ որպէս փոյթ յանձին ունի հանապազ վաստակել վասն օգտի և բախտաւորութեան հայրենի ազգին

լիւրոյ ի նոյն սակս և մեք այժմոս խոնարհա- զէմ համարձակութեամբ վստահանամք առա- քելով ընդ սմին զիսկական օրինակն գրու- թեան պայծառափայլ գրաֆ Վորոնցովին առ գրաֆ Պէքէնդորֆն ըստ իշեալ ի վերոյ ա- ռարկայի ի ծանօթութիւն գերազանցափայլ վեհազնութեան ձերոյ խնդրեմք երես անդեալ ով ասպետափառ իշխանապետ մի անտես արասջիք ըստ բնատուր սրտի ձերոյ ազգա- կան կարեկցութեան բարեխօսել առ նորին պայծառափայլութիւն գրաֆ Պէքէնդորֆն, որպէսզի նա ի կողմանէ իւրմէ բարեհաճեցի միջնորդել առ ողորմած կայսերն մեր յաղա- գրս ազատս կացուցանելոյ զհասարակութիւն մեր ի նոր եղեալ հարկաց և հաստատելոյ զպարզեալ հասարակութեան մերում բարձ- րագոյն հրովարտական ի կայսերացն Ռու- սաց տէրութեան որպիսի ազգասիրական միջնորդութեամբ ձերով վեհազնեայ իշխա- նապետ յափտեանս ժամանակաց ունիք ան- մահացուցանել զանուն ձեր պատուական ազգի մերում և պարտաւոր հատուցանել ձեզ յերախտապարտ հասարակութիւն մեր որ մեծ պատիւ և պարծանք համարէ ինքեան եթէ գերազանցափայլ վեհազնութիւն ձեր արժանի արասցէ զմեզ ախորժելի ծանուցմամբ իւրով զորպիսութեանէ և զհանգամանաց իշեալ մա- տուցեալ նորին մեծութեան աղերսագրոյ մե- րոյ յորոյ մասին նույնպէս խնդրել եմք ա- ռանձին և զպայծառափայլ գրաֆ Պէքէն- դորֆն գերազանցափայլ վեհազնեայ իշխա- նապետ ձերդ ազգասէր բարերարութեան ան- մենաողորմ Տեառն ամենախոնարհք և ամե- նանուստ ծառայք ստորագրեցեալ են նախ քաղաքական գլուխ խաչատուր Խոմաճով ընդ նմին ստորագրեցեալ են հոգաբարձուր տասն և ութ անձինք:*)

Մի տարի անց նոր-նախիջևանի հայ հա- մայնքը երկու մարդու լիազորում է, որպես- զի ներկայանան կայսեր և խնդրեն հարկերը թեթևացնել. այս մասին կա հետևյալ վավե- րականը.—

Համահանոյական վճիռ

Մեք ի ներքոյ սմին ստորագրեալքս Նախի- ջևան քաղաքի առ հասարակ վաճառականք, մեշշանք ցեխովի և գիւղացիք միազումար գոլով ի կոշումն քաղաքական խորհուրդա- րանն մերոյ ընդ պլավայի միաշունչ և միա- խորհուրդ ընտրեցաք ի մէնջ, մեր 14-ում քլասն Դավիթ Օդապաշտովին և Կիրակոս Ա- րարազովին— վասն նորոգ վիճակի ծանր հարկապահանջողութեան դնալ ի Սանգտ Բե- դերպուոզ առ դրան ամենաողորմած կայսեր

խնդրել ազատութիւն առ այն որքան կա- րողէք ի հասարակութեանէ յօգուտն հետեւի զի այս բրիկովորս ստորագրութեամբ մերոյ հաստատեմք. եղև փետրվարի 5 ատուր 1840 յամի:**)

Այնուհետև հետևում են 65 ստորագրու- թյուններ:

Պիտի ասել, որ բոլոր աղերսագրերն ու միջնորդությունները ապարդիւն են մնում, իսկ սակավազորների վիճակը ավելի քան վատթարանում է: Չունևորներից ոմանք հարկերից ազատվելու և որոշ արտոնու-

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 49, էջ 7.
**) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 48, թերթ № 3.

թյուններ ձեռք բերելու միակ ելքը թերևս փնտրում են հոգևորական կոչում ընդունելու մեջ: Այդպես է վարվում, հավանականորեն, և 19-ամյա պատանի Միքայելը: Պահպանվել է նոր-Նախիջևանի հասարակության 1848 թ. մայիսի 10-ի ժողովի կողմից տրված արձակման գիրը՝ Նալբանդյանի դիմումի առթիվ: Այդ գրույթյան մեջ հայտնվում է Նալբանդյանի հոգևոր կոչում ընդունելու հետևանքով նրան աշխարհականների ցուցակից հանելու և մինչև նոր աշխարհագիր (մարդահամար) լինելը հարկերից ազատելու մասին: Բերում ենք այդ վավերականը.—

Արձակման գիր

10 մայիսի 1848 ամի... Թաղանրոզու քաղաքապետութիւն իշխանութեան Նախիջևան քաղաքի որ առ Դոն գետու, ներկայ հասարակութիւն հայոց քաղաքացեաց ի հաւաքման ընդ նախագահութեան պ. քաղաքական գլխոյ համաձայն խնդրոյ տեղւոյս մեշխանին Միքայէլը Ղազարեանի Նալպանդեանց որ է այժմ ի ծննդէ 19 ամաց, յայտնելոյ նորա ցանկութիւն իւր մտանել ի հոգևորական կոչումն, որ կայր գրեալ ի 8-րդ աշխարհագրոյն ի թիւ քաղաքացեաց քաղաքիս Նախիջևանայ ընդ համարու 26, ունելով ի նկատման գի նա Նալպանդովն յայսմ Նախիջևան քաղաքի շունի ոչինչ յայնմ պատճառունս, մեք բոլորեքեանքս յայտնեցաք զյօժարութիւն մեր ի յայնպիսի ցանկութիւն Միքայէլին Ղազարեան որ կամի մտանել ի հոգևորական կոչումն և պարտաւոր լինեմք մինչև ցլինել նորոք աշխարհագրության վասն նորա ամենայն տեսակ արքունական հարկան և այլ տուչութիւնան տալ, և ի հաստատութիւն այնմ տամք նմա Նալպանտովին այս արձակման գիրս յաղագս յանդիման կացուցանելոյ ուր հարկն է:

Այս արձակման գրի տակ կան 69 անձանց ստորագրութիւնները և քաղաքագլուխ Խալիպովի հետևյալ մակագրութիւնը.—

Որովհետև այս արձակման գիրս իսկապէս Նախիջևանայ հայոց հասարակութիւնն ի ներկայութեան իմոյ արար և նշանակեալ թիւք քաղաքացեաց 69 անձանց սեփական ձեռամբ ստորագրեցին, ըստ մտաց գրոյն ստորագրութեամբ իմով և դրոշմամբ քաղաքական կնքոյ վկայեմ Նախիջևանի քաղաքական գլուխ Խալիպովի:

Մայիսի 10 1848 ամի*)

Սույն արձակման գրի կա նաև ուսուցիչներն արձակուող:

Նալբանդյանը, նույն օրը և եթ Նախիջևանի հոգևոր կառավարութեանը տեղեկացնելով այս արձակման գրի ստացվելու մասին, խնդրում է ներկայացնել այն ուր հարկն է: Բերում ենք Նալբանդյանի այդ գրույթը.—

Խնդրէ, արձակեալ ի Նախիջևանայ Հայոց հասարակութենէ յաղագս մտանելոյ ի հոգևորական կոչումն, հայ Միքայէլը Ղազարեան Նալպանդովն, իսկ եթէ զի՛նչ է խնդիր իմ այնմ զհետ զան յօդուածք:

Ցանդիման կացուցեալ ընդ ամին զարձակման վկայագիրս, զոր տուեալ է ինձ Նախիջևանայ հայոց հասարակութիւն ի մասին մտանելոյ իմ ի հոգևորական կոչումն վաւերացուցեալ ստորագրութեամբ Նախիջևանայ քաղաքական գլխոյ, ամենակատարելութեամբ խնդրեմ: Ի ամին խնդրոյ արձակեալ Նախիջևանայ հայոց հասարակութենէ:

Որպէսզի ընկալեալ զայս խնդիր իմ հրամայեալ լիցի յաղագս առաջի առնելոյ զվերոյիշեալ վկայագիրս ուր հարկն է ի մասին ի բաց հանելոյ զիս ի թուոյ ցեխավոյցից Նախիջևանայ առնել զպատկանեալ կարգադրութիւն: Ի 10 մայիսի 1848 ամի, խնդիրս այս պատկանի մատուցանել ի Նախիջևանայ հայոց Հոգևոր կառավարութեան, զխնդիրս զայս շարագրեցի, պարզագրեցի և ստորագրեցի

Միքայէլը Ղազարեան Նալպանդով:

Բնակութիւն ունիմ ի Նախիջևան քաղաքի ի հայրենական տան:*)

Սույն գրութեան վրա կա հետևյալ մակագրութիւնը.—

«Ձե 63 ընկալաւ կառավարութիւնս ի 10 մայիսի 1848 ամի յերկուշաբթի»:

Քննութեան առնելով Նալբանդյանի սույն խնդրագիրը և այդ առնչութեամբ Նախիջևանի հասարակութեան արձակման գիրը, հոգևոր կառավարութիւնը 1848 թվի հունիսի 2-ի նիստում որոշում է այս մասին իրազեկ դարձնել թեմի առաջնորդ Մատթէոս արքեպիսկոպոսին՝ համապատասխան կարգադրութիւն անելու համար: Բերում ենք այդ որոշումը.—

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 693, թերթ 21:

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 693, թերթ 18:

Ն. Ն. Գ.

Ի Նախիջևանայ Հայոց
Հոգևոր Կառավարութիւն
2 յունիսի 1848 ամի

№ 1

Նախիջևան

Յաղագս մտանելոյ ի հոգևորական կոչումն արձակեալ ի հասարակութենէ Միքայէլ Ղազարեանի Նալպանտով— Դարբինեանց:

Առաջարկութիւն առ նորին բարձու սրբազանութիւն հանդերձ արձակման թղթովն 2 յունիսի 1848 ամի

№ 218

Լուան զխնդիր արձակեալ ի Նախիջևանայ հասարակութենէ յաղագս մտանելոյ ի հոգևորական կոչումն հայ Միքայէլ Ղազարեան Նալպանտովի ի 10-էն ժայիսի սոյն ամի՝ ընդ որում յանդիման կացուցեալ զարձակման վկայագիրն զոր տուեալ է Նախիջևանայ հայոց հասարակութիւն ի մասին մտանելոյ ի հոգևոր կոչումն վաւարացուցեալ ստորագրութեամբ Նախիջևանայ քաղաքական զլիտոյ՝ խնդրէ ընկալեալ զայն խնդիր առաջի առնել զվերոհիշյալ վկայագիրն ուր հարկն է՝ վասն ի բաց հանելոյ զինքն ի թուոց ցեխավոյցից Նախիջևանայ առնել զպատկանելն տնօրէնութիւն:

Հրամայեցին. —

Համաձայն 103 յօդուածոյ բարձրագոյն կարգադրութեան յաղագս կառավարութեան գործոց Լուաւորչական եկեղեցւոյ Հայոց ի Ռուսաստան՝ առաջի առնել ցայսմանէ նորին բարձու սրբազանութեան Տեսուն Մատթէի թեմակալի Արքեպիսկոպոսին Նախիջևանայ և Բեսարապիոյ մատուցանելով և զխակական արձակման վկայագիրն թողլով աստ ի գործումն զպատճէնն այնորիկ, և խնդրի՝ զի զոր ինչ և արժանն է տնօրինեսցէ վասն նորա: Իսկ յաղագս մին թերթ կերպովոյ թղթոյ որ ի գործածաւ ի սմին առննիս փոխանակ նորին զհասարակ թուղթ, պահանջեալ ի խնդրագործէն զզինս այնր զտասնևհինգ կոպէկ արծաթոյ՝ առաքել ի Ռաստովու արքունական գանձարանն ընդ առանձին հաղորդական թղթով*):

Չորրորդ աստիճանի հոգևոր կոչումն ընդունելով դպիր Միքայել Նախիջևանի Ս. Լուսավորիչ եկեղեցւոյ պաշտօնավարում է մինչև 1848 թվի օգոստոս ամսվա վերջը: Թեմի առաջնորդը նկատելով պատանի Միքայելի ուշիմությունն ու խելացիությունը

մի գրութեամբ տեղեկացնում է Նախիջևանի հոգևոր կառավարութեանը, որ ինքը մտադիր է նրան իր մոտ տանել գրագիր-քարտուղարի պաշտօնով: Իհրում ենք առաջնորդի գրությունը. —

Ի բեմակալ Առաջնորդէ Նոր-Նախիջևան այ և Բեսարաբիոյ
ի Մատթէոս Արքեպիսկոպոսէ

Հոգևոր կառավարութիւն Հայոց Նոր Նախիջևան քաղաքի
Առաջադրութիւն

Տեսանելով մեր զընդունակութիւն չորրորդ աստիճանաւորի դպիր Միքայէլ Ղազարեանի ստորին պաշտօնէի սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ յաղագս գրագրութեան և սպասարութեան մերոյ, ընկալաք առ մեզ — ունիլ,

ընդ մեզ ի մերում վիճակի ի գործոն, զորմէ ի տեղեկութիւն ստենիդ սովաւ ծանուցանեմք ի 19 օգոստոսի 1848 ամի ի Նոր Նախիջևան:

Թեմակալ Առաջնորդ Նոր Նախիջևանայ և Բեսարաբիոյ Հայոց

№ 129**)

Արքեպիսկոպոս Մատթէոս

Քարտուղարի պաշտոն ստանձնելով Նալբանդյանը հնարավորություն է ստանում թի շրջագայելու Նախիջևանի ու Բեսարաբիայի

ընդարձակ թեմի բոլոր հայաբնակ վայրերը և թե մոտիկից ծանոթանալու ժամանակի հասարակական-քաղաքական խնդիրներին:

(Շարունակելի)

*) ՀՄՍՌ Պետական կտրոնական արխիվ, ֆոնդ № 54, դործ № 693, թերթ 19:

***) Նույնը, թերթ 22: